ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, ավագանու անդամ Սամվել Անանյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Աշոտ Անտինյանը, Սերյոժա Սարդարյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը, Շուշանիկ Հակոբյանը և Գրիգոր Կարապետյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին.
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Արմենուհի Ոսկանյանը և Արշակ Սրապյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Սևակ Խաչատրյանը և Թիանա Բոջուկյանը:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սամվել Անանյանը ժամը 13.10-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 4-8-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

4. Փամբակ համայնքի 2023թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

5. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Սոֆիա Սուրենի Սարդարյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, կառուցապատման և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

Կողմ՝ 11 ձայների համաձայնությամբ որոշումների նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 15-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնք 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

3. Փամբակ համայնքի 2023թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Սոֆիա Սուրենի Սարդարյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, կառուցապատման և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Ս. Անանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնք 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը:

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2022թ-ի բյուջեի և տարեկան աշխատանքային պլանի կատարման վերաբերյալ հաշվետվությունները:

2022թ-ի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 564551.8 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 622329.6 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 90.7%:

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 658147.7 հազար դրամի ծախս՝ կազմելով ճշտված ծրագրի 87.3%-ը:

Զեկուցողը ներկայացրեց նաև 2022թ-ի ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերը և դրանց իրականացման նպատակով կատարված աշխատանքները:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 16-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Մարգահովիտ գյուղի սեփականատեր Ժիրայր Սուրենի Չոբանյանի՝ իր ընտանիքի սեփականություն հանդիսացող 06-070-0050-0001 կադաստրային ծածկագրով 0,0292 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասը, կադաստրային քարտեզի սխալի ուղղման նպատակով, բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության փոխադրելու խնդրանքով:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 17-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի 2023թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ 2023թ-ի տարեկան աշխատանքային պլանով /այսուհետ ՏԱՊ/ նախատեսվել է իրականացնել 8 ծրագիր, որոնք բխում են համայնքի զարգացման ծրագրից:
1. Վահագնի և Արջուտ բնակավայրերի փողոցների նորոգում ասֆալտապատման միջոցով:
2. Բազում բնակավայրի նախկին համայնքապետարանի շենքի հիմնանորոգում որպես մշակույթի կենտրոն, Փամբակ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:
3. Լեռնապատ բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում:
4. Մարգահովիտ, Լեռնապատ, Անտառամուտ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով:
5. Միկրոավտոբուսի ձեռք բերում:

6. Արջուտ բնակավայրում նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի արևմտյան մասնաշենքի վերանորոգման-արդիականացման աշխատանքներ:
7. Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության ստեղծում:
8. Փամբակի համայնքապետարանի շենքին կից՝ կցակառույցի կառուցում և համայնքապետարանի բակի նորոգում ու բարեկարգում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 18-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Սոֆիա Սուրենի Սարդարյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել սեփականատեր Սոֆիա Սուրենի Սարդարյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 06-070-0335-0002 ծածկագրով 0.09118 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսքը ջերմոցներ՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու և սպասարկման նպատակով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելու խնդրանքով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 19-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնք Վահագնաձոր 3-րդ փողոց 1-ին նրբանցք 9-1/1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 06-102-0250-0004/, համայնքային

սեփականություն հանդիսացող 92.39 քմ մակերեսով տարածքի, բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած 0,02 հա հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ սեփականության իրավունքի համայնքի բաժնեմասը նվիրատվությամբ անհրաժեշտ է փոխանցել տվյալ բնակարանը տիրապետողներ Հովիկ Ազատի Աթոյանին և Անահիտ Գագիկի Ավետիքյանին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 20-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի Վահագնաձոր 3-րդ փողոց 1-ին նրբանցք 9-1/1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 06-102-0250-0004/, համայնքային սեփականություն հանդիսացող 103.83 քմ մակերեսով տարածքի, բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած 0,02 հա հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ սեփականության իրավունքի համայնքի բաժնեմասը նվիրատվությամբ անհրաժեշտ է փոխանցել տվյալ բնակարանը տիրապետողներ Գևորգ Սարիբեկի Մքոյանին և Վարդուհի Հրանտի Աղաջանյանին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 21-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, կառուցապատման և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ նախատեսվում է աճուրդ-վաճառքով օտարել հողատեսքեր 6 լոտով, վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի

ժամկետով տրամադրել գյուղատնտեսական նշանակության հողամաս 1 լոտով և կառուցապատման իրավունքով՝ 50 տարի ժամկետով տրամադրվում է հողամաս 1 լոտով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 22-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի մարտի 24-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի մարտի 24-ը:

Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ս. ԱՆԱՆՅԱՆ Շ. ՀԱԿՈԲՅԱՆ

Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Պ. ՊԱՊԻՆՅԱՆ

Ս. ՍԱՐԴԱՐՅԱՆ Ս. ՄԱՐԱՆԴՅԱՆ

Ա. ԱՆՏԻՆՅԱՆ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 03 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 16-րդ հոդվածի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի փետրվարի 27-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

«27» փետրվարի 2023թ-ի թիվ 03 հերթական նիստի

1" ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնք 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին:
2. Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
3. Փամբակ համայնքի 2023թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
4. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Սոֆիա Սուրենի Սարդարյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցելու մասին:
6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցելու մասին:
7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, կառուցապատման և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
8. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 16-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82.1-ին հոդվածի 6-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել հաշվետու տարում Փամբակ համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

Հավելված 1
Փամբակ համայնքի ավագանու
2023թ-ի փետրվարի 27-ի թիվ 16-Ա որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեն կատարվել է.

Ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 564.551.800 դրամ, ծրագրված (ճշտված) 622.329.600 դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 90.7%:

Ընդ որում՝ Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրավորված (ճշտված) 527.098.400 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 478.495.400 դրամ՝ ապահովելով 90.8% կատարողական, ֆոնդային մասով ծրագրված (ճշտված) 212 078 200 դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 116.471.800 ապահովելով 54.9% կատարողական:

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 159.957.300 դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 111.518.000 հազար դրամ կամ 69.7%:

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 658.147.700 դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 87.3%-ը:

Հարկ է նշել, որ 2022 թվականի ավարտին թողնվել են պարտքեր վարչական բյուջեի մասով 84.000 հազ. դրամ, ֆոնդային բյուջեի մասով 5.614.100 դրամ, ճանապարհային տրանսպորտի և փողոցային լուսավորության կատարված աշխատանքների մասով:

Ստորև ներկայացվում է Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն վերլուծությունը:

Հարկեր և տուրքեր.

– Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով տարվա ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 343.800 դրամ, ծրագրված (ճշտված) 400.000 դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 85.9%:

- Հողի հարկի ապառքի մասով տարեկան մուտքերը կազմել են 5.164.100 դրամ, ծրագրված (ճշտված) 4.000.000 դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 129.1%:
- Անշարժ գույքի հարկի մասով չորրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 20.625.900 դրամ, ծրագրված (ճշտված) 27.813.400 դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 74.2%:
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով տարեկան մուտքերը կազմել են 50.732.600 դրամ, ծրագրված (ճշտված) 93.930.200 դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 54.0%:
- Տեղական տուրքերի մասով տարեկան փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 4.590.900 դրամ՝ նախատեսված (ճշտված) 4.381.700 դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 104.8%:

Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.

Պաշտոնական դրամաշնորհների՝ դոտացիայի մասով տարեկան մուտքերը կազմել են 351.976.700 դրամ, ծրագրված (ճշտված) 351.976.700 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%:

Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաների) վարչական բյուջեի մասով տարեկան մուտքերը կազմել են 134.400 դրամ, ծրագրված (ճշտված) 134.400 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%: Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) մասով տարեկան մուտքերը կազմել են 59.096.700 դրամ, ծրագրված (ճշտված) 59.096.700 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%:

Այլ եկամուտներ.

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեով տարեկան այլ եկամուտների գծով նախատեսված 71.886.800 դրամի դիմաց, փաստացի մուտքագրվել է 80.596.500 դրամ, որից.

- Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 10.439.200 դրամ, ծրագրված (ճշտված) 12.733.100 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 82.0%:
- Այլ գույքի վարձակալությունից մուտքերի մասով փաստացի մուտքերը կազմել են 1.460.000 դրամ, ծրագրված (ճշտված) 1.584.900 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 92.1%:
- Տեղական վճարների մասով փաստացի մուտքերը կազմելեն 12.861.400 դրամ, ծրագրված (ճշտված) 10.145.000 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 126.8%:
- Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 3.922.200 դրամ, ծրագրված (ճշտված) 4.000.000 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 98.0%:
- Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվություններ) մասով փաստացի մուտքերը կազմել են 15000.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 15.000.000 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%-ով:
- Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված կապիտալ տրանսֆերտների (նվիրատվություններ արտաքին աղբյուրներից) մասով փաստացի մուտքերը կազմել են 26.959.700 դրամ, ծրագրված (ճշտված) 36.134.500 հազ.դրամի նկատմամբ, կամ կատարվել է 74.6%:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի կատարվել է 30.415.400 դրամ հատկացում, ծրագրված (ճշտված) 116.847.000 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 26.0%:

- Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների մասով փաստացի մուտքերը կազմել են 1.243.300 դրամ, ծրագրված (ճշտված) 999.000 դրամի նկատմամբ, կամ կատարվել է 124.4%-ով:

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի ծախսերը.

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 658.147.700 դրամի ծախս, ծրագրված (ճշտված) 754.123.800 դրամի դիմաց կամ կատարվել է ծրագրվածի 87.3%-ը:

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	183.911.100	183.858.300	100
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	59.590.500	53.773.200	90.2
ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	164.201.800	140.736.500	85.7
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ	2.000.000	1.840.000	92.0
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	30.000	30.000	100
ՀԱՐԿԵՐ,ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ	3.353.400	2.817.000	84.0
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	400.000	317.100	79.3
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	295.533.700	233.875.400	79.1
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	29.864.900	29.861.500	100
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	29.111.000	26.451.000	90.9

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ /ԿԱՄ/ ԿԱՊԻՏԱԼ ԱԿՏԻՎԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	8.610.000	8.610.000	100.0
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-6.500.000	0	0
ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-15.982.600	-24.022.300	150.3
ԸՆԴԱՄԵՆԸ	754.123.800	658.147.700	87.3

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.

դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացիկ ատարված	Կատարման %
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	312.268.500	296.064.000	94.8
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	155846.6	148883.6	95.5
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	62.425.000	41.677.700	66.8
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԵՎ ԿՈՄՈՒՆԱԼԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	99.933.200	58.192.100	58.2
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	53.773.300	53.562.800	99.6
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	68.477.200	58.477.500	85.4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1.400.000	1.290.000	92.1
ԸՆԴԱՄԵՆԸ	754.123.800	65.8147.700	87.3

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2022թ-ի ընթացքում Փամբակ համայնքում իրականացվել են ընդհանուր 698"638"398 ՀՀ դրամի ծրագրեր, որից՝

1" Սուբվենցիոն ծրագրերով իրականացվել են ընդհանուր 321.988"708 դրամի աշխատանքներ, համայնքի ներդրումը կազմել է 156"637"185 ՀՀ դրամ, իսկ պետության կողմից հատկացված սուբվենցիան կազմել է 165"351"523 ՀՀ դրամ:
2" Համայնքի բյուջեի և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել են 341"929"690 ՀՀ դրամի տարաբնույթ ծրագրեր:

3. Սոցիալական աջակցության ոլորտում իրականացվել են 34.720.000 դրամի ծրագրեր, որից 1"290.000-ը՝ համայնքի բյուջեից:

1. Համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվեցիոն ծրագրերի շրջանակներում Փամբակ համայնքում 2022թ-ին պլանավորված աշխատանքներից իրականացվել, կամ դեռևս ընթացքի մեջ են գտնվում հետևյալ ծրագրերը՝

· Բազում բնակավայրի 3-րդ, 6-րդ փողոցների և Վահագնաձոր բնակավայրի դպրոց ու եկեղեցի տանող ճանապարհի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 44 187 990 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմել է 19 884 600 ՀՀ դրամ, իսկ պետության կողմից հատկացված սուբվենցիան կազմել է 24 303 390 ՀՀ դրամ:

Բազում բնակավայրում իրականացվել է 700 գծամետր երկարությամբ 4 մ. լայնությամբ ճանապարհի տուֆապատման աշխատանքներ.

Վահագնաձոր բնակավայրում իրականացվել է շուրջ 300 գծամետր երկարությամբ ճանապարհի տուֆապատման աշխատանք:

· Ձորագետ բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող շենքի ամրացում, տանիքի կապիտալ հիմնանորոգում: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 78 553 744ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմել է 47 132 246ՀՀ դրամ, պետության կողմից հատկացված սուբվենցիան՝ 31 421 498 ՀՀ դրամ: Ծրագրի արդյունքում կիրականացվի շուրջ 780 քմշինության ամրացում, կապիտալ կհիմնանորոգվի տանիքը՝ հետագայում որպես ժամանցային կենտրոն գործելու նպատակով: Ծրագրի աշխատանքներն ամբողջությամբ չեն ավարտվել, եղանակային պայմաններից ելնելով այն տեղափոխվել է 2023թ.:

· Ձորագյուղ բնակավայրի ճանապարհի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով, ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 35 854 544 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմել է 16 134 545 ՀՀ դրամ, պետության կողմից հատկացված սուբվենցիան կազմել է 19 719 999 ՀՀ դրամ: Ծրագրի արդյունքում կիրականացվի 700 գծամետր

երկարությամբ, 5 մ լայնությամբ ճանապարհի տուֆապատման աշխատանքներ: Աշխատանքներն ավարտական փուլում են, եղանակային պայմանների պատճառով աշխատանքները տեղափոխվել են 2023թ":

· Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի կառուցում և նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 48 308 000 ՀՀ դրամ որից համայնքի ներդրումը կազմել է 19 323 200 ՀՀ դրամ, պետության կողմից հատկացված սուբվենցիան՝ 28 984 800 ՀՀ դրամ:

Եղեգնուտ բնակավայրում իրականացվել է գիշերային լուսավորության կառուցում 3.5 կմ ճանապարհի երկարությամբ, իսկ Լեռնաջուր բնակավայրում իրականացվել է 4.5 կմ ճանապարհներում արդեն իսկ նախկինում առկա լուսավորության համակարգի վերակառուցում, արդիականացում: Էլեկտրաէներգիայի խնայողության նպատակով երկու բնակավայրերում տեղադրվել են նաև արևային ֆոտովոլտային կայաններ, որոնք ապահովում է լուսավորության համակարգերի էներգիայի խնդիրը:

· Լեռնապատ բնակավայրի 10-րդ փողոցի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 40 952 920 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմել է 18 428 814 ՀՀ դրամ, պետության կողմից հատկացված սուբվենցիան՝ 22 524 106 ՀՀ դրամ: Ծրագրի արդյունքում իրականացվել է 1 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհի կապիտալ նորոգում:

· Մարգահովիտ բնակավայրի 1-ին փողոցի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 52 171 510 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմել է 23 477 180 ՀՀ դրամ, պետության կողմից հատկացված սուբվենցիան՝ 28 694 330ՀՀ դրամ: Ծրագրի արդյունքում իրականացվելու է 900 գծամետր երկարությամբ, 5 մլայնությամբ, 4500 քմ ընդհանուր մակերեսով ճանապարհահատվածի նորոգում՝ տուֆապատման միջոցով: Ծրագիրը միտված է կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանը: Աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են, կախված եղանակային պայմանների հետ:

. Արջուտ բնակավայրի համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում: Ծրագիրը մեկնարկել է 2021թ-ին՝ մինչև համայնքների խոշորացումը, սակայն ավարտին է հասցրվել 2022թ-ին: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 21"960.000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմել է 12"256"600 ՀՀ դրամ, պետության կողմից հատկացված սուբվենցիան՝ 9"703"400 ՀՀ դրամ:

2. Համայնքի բյուջեի և այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրեր.

1) ՅՈՒՆԻՍԵՖ-ի միջոցներով և համայնքապետարանի ներդրմամբ.

- Այլընտրանքային նախադպրոցական ծառայություններ ծրագրի շրջանակներում Անտառամուտ գյուղում բացվել է այլընտրանքային մանկապարտեզ, շենքի տանիքին տեղադրվել է արևային ֆոտովոլտային համակարգ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 8016510 ՀՀ դրամ
- Արջուտ բնակավայրում իրականացվել է նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի արևմտյան մասնաշենքի վերանորոգման-արդիականացման աշխատանքներ: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմում է 5 405 000 ՀՀ դրամ, որից 5 275 000 դրամը տրամադրվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից, 130 000 դրամը ներդրվել է համայնքի բյուջեից:
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության /ԿԳՄՄՆ/ և համայնքի բյուջեի համաֆինանսավորմամբ Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում իրականացվում է այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության ստեղծման ծրագիրը: Արդյունքում Ազնվաձորի վարչական շենքի առաջին հարկը վերանորոգվում է որպես վաղմանկական զարգացման ծառայությունների կենտրոն, նորոգվում է տանիքը, որի վրա տեղադրվելու է արևային ֆոտովոլտային պանելներ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 9169,2 հազ. դրամ, որից 7737,0 հազ. դրամը տրամադրվում է ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից՝ շինարարական աշխատանքների համար, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի կողմից ներդրվում է 1,282,190 ՀՀ դրամ՝ շին. աշխատանքների համար, տեղադրվելու են արևային պանելներ, իրականացվելու են մասնագետների վերապատրաստումներ, տրամադրվելու է գույք: Համայնքի ներդրումը կազմում է 150,0 հազ. դրամ: Աշխատանքների մեծ մասն իրականացվել են, մնացած աշխատանքները տեղափոխվել են 2023թ:

Ծրագրերի արդյունքում Անտառամուտ, Արջուտ և Ազնվաձոր բնակավայրերում ունենք շինարարական նորմերին համապատասխանող մանկապարտեզի շենքեր, որտեղ իրենց կրթական իրավունքից կօգտվեն մոտ 50 երեխա:

2) Հայաստանի Սոցիալական Ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ.

- Տեղական Զարգացման ծրագիր շրջանակում իրականացվում է Փամբակ համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում ծրագիրը: Ընդանուր բյուջեն կազմում է 172200 000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմում է 8 610 000 ՀՀ դրամ: Ծրագրի արդյունքում համայնքը կունենա էքսկավատոր CAT -428F2՝ 1 հատ, ինքնաթափ Shachman՝ 1 հատ, աղբատար՝ 2 հատ, աղբաման 700 լ տարողությամբ՝ 50 հատ: Ծրագրի ավարտից հետո մի շարք հիմնախնդիրներ հնարավոր կլինի հասցնել իրենց հանգուցալուծմանը: Համայնքը իր կողմից արդեն իսկ կատարել է ներդրումը, նախատեսված տեխնիկայի և գույքի ձեռքբերման աշխատանքները մոտենում են ավարտին:

3) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության՝ ԳՄՀԸ-ն (Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH) ֆինանսավորմամբ.

- Փամբակի համայնքապետարանում ստեղծվել է սպասարկման գրասենյակ: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 12 041 990 ՀՀ դրամ: Ծրագրի արդյունքում վերանորոգվել է գրասենյակը՝ 6 աշխատակցի հաշվով ձեռք է բերվել գրասենյակային գույք և համակարգչային տեխնիկա: Ծրագրի արդյունքում ավելի հարմարավետ է դարձել համայնքապետարանի աշխատակիցների աշխատանքը, համայնքի բնակիչներին մատուցվում է ավելի որակյալ ծառայություն, բարձրացել է սպասարկման որակը:
-

4) «Հայաստանի մանուկներ» /ՔՈԱՖ/ բարեգործական հիմնադրամի միջոցներով.

- Փամբակ համայնքի Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ, Եղեգնուտ և Դեբետ գյուղերում իրականացվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության ներդրում» ծրագիրը: Ծրագրի արդյունքում ձեռք է բերվել և «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ին է տրամադվել MAZ մակնիշի աղբատար մեքենա, նշված բնակավայրերում տեղադրվել են 65 աղբամաններ՝ ընդհանուր 37000,0 հազ դրամ արժողությամբ: ՀՈԱԿ-ի կողմից պատշաճ իրականացվում են աղբահանության աշխատանքները:
- Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ին է տրամադրվել ՊԱՅ մակնիշի ավտոբուս, երթուղին անցնում է Դսեղ, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր և Փամբակ գյուղերով և նրանք կապում է մարզկենտրոն Վանաձորին, բնակիչներին մատուցվում է որակյալ տրանսպորտային ծառայության:
- Դեբետ գյուղում բացվել է նոր, ժամանակակից ավտոկանգառ, խաղահրապարակ և գեղեցկության սրահ: Վերանորոգվել է Դեբետի վարչական կենտրոնի շենքի տանիքը, շենքի մի հատված վերանորոգվել է որպես «Հայփոստի» բաժանմունք, 12 ընտանիքի տրվել է մեղվափեթակներ:
- 2022թ-ին մեկնարկել է Դեբետ գյուղի հին դպրոցի քանդման և նոր դպրոցի նախագծման աշխատանքները: Դպրոցի կառուցման աշխատանքները պլանավորվում է 2023թ-ին:
- Դեբետ, Եղեգնուտ, Ձորագյուղ, Վահագնի գյուղերում պարբերաբար իրականացվել են առողջապահական հետազոտություններ, անհրաժեշտության դեպքում շահառուներին աջակցել են բուժման կամ վիրահատական միջամտությունների համար:

5) «Հայաստանի մանուկներ» /ՔՈԱՖ/ բարեգործական հիմնադրամի և Հայ Ավետարանչական ընկերակցության /AMAA Armenia-ի/ հետ համատեղ «ՉիզԱփ» ծրագրի շրջանակներում.

- ստեղծվել է «Ձորի հասկ» կոոպերատիվը, Դեբետ, Եղեգնուտ, Ձորագյուղ, Վահագնի գյուղերի համար ձեռք է բերվել կոմբայն.
- «Ձորի հասկ» կոոպերատիվին տրամադրվել է ինքնաթափ բեռնատար մեքենա՝ Shachman .
- «Ձորի հասկ» կոոպերատիվին տրամադրվել է 3 հատ կերաղաց՝ ծրագրի շահառու Դեբետ, Եղեգնուտ, Ձորագյուղ, Վահագնի գյուղերի բնակիչներին սպասարկելու համար.
- ծրագրի շահառու 4 գյուղերի 6 և ավել խոշոր եղջերավոր անասուններ ունեցող ընտանիքներին տրվել են կաթի ագրեգատներ.

- սերմնավորվել են Դեբետ, Եղեգնուտ, Ձորագյուղ, Վահագնի գյուղերի 250 ԽԵ անասուններ.
- ծրագիր շահառու 300 ընտանիքի տրվել է հացահատիկային և խոտաբույսերի սերմեր:
- Դեբետ գյուղում բնակեցված արցախցիներին տրամադրվել է մեկական հղի ԽԵ անասուն:
- Կազմակերպվել են դասընթացներ գյուղատնտեսական զարգացվածության թեմաներով բոլոր շահառու ընտանիքների համար:

6) «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից համայնքին նվիրաբերվել է 15"000"000 դրամ, որն ուղղվել է 2023թ-ին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի նախահաշիվների ձեռքբերմանը:

7) «Եվրասիա» Բարեգործական հիմնադրամի աջակցությամբ.

- Դեբետ գյուղում կառուցվել է մեծահասակների համար նախատեսված խաղասենյակ:
- «ՏԻՄ-երի առաջնորդության հմտությունների զարգացում» ծրագրի շրջանակներում Վահագնի գյուղի կողմից ներկայացվել է «Նոր կյանք տեխնոպարկին» զարգացման ծրագիրը, որը կյանքի է կոչվել «Եվրասիա» ԲՀ-ի, համայնքապետարանի և «Վահագնի» զարգացման հիմնադրամի ուժերով: Վերանորոգվել է տեխնոպարկի տանիքը, ծրագրով նախատեսված մյուս աշխատանքներն ընթացքի մեջ են:

8) Լիլիա Աբրահամյանի ջանքերով.

- Ֆինանսավորմամբ Focus on Children Now – FCN բարեգործական կազմակերպության՝ ի դեմս Անահիտ Քալանթարյանի և Լիլիա Աբրահամյանի միջնորդությամբ Լեռնապատ գյուղի մանկապարտեզը համալրվել է նոր գույքով՝ երկհարկանի մահճակալներով, հանդերձապահարաններով և անկողնային պարագաներով:
- Լեռնապատ գյուղի մանկապարտեզում տեղադրվել է 300,0 հազ. դրամ արժողությամբ արևային ջրատաքացուցիչ, որի շնորհիվ լուծվել է մանկատարտեզի տաք ջրի խնդիրը:
- Ձորագետ գյուղի դպրոցին տրվել է պրոեկտոր, իսկ բուժ. ամբուլատորիա բացելու համար՝ համապատասխան բժշկական սարքավորումներ:
- Բազում գյուղում Լիլիա Աբրահամյանի և ABB /Էյդ Բիոնդ Բորդրս/ կազմակերպության միջոցներով, որպես ժամանցի և վերականգնողական կենտրոն, հիմնվել է «Յուրահատուկ» սենյակ, կառուցվել է խաղահրապարակ, թվով 98 աշակերտի սեպտեմբերի 1-ի կապակցությամբ տրամադրվել են գրենական պարագաներ: 25 միայնակ ծերերի տրվել են սննդի փաթեթներ: 3 սոցիալապես անապահով ընտանիքի հատկացվել է 1 տոննա բիովառելիք: Ամանորի կապակցությամբ Բազում գյուղի 60 երեխա մայրաքաղաք Երևանում մասնակցել է միջոցառման, կազմակերպվել է հյուրասիրություն և բոլորին տրվել է նվերներ:
- Բազում և Վահագնի գյուղերի 4 և ավել երեխա ունեցող 5 անապահով ընտանիքի տրվել է կենցաղային տեխնիկա, 1 կով, սնունդ և հագուստ:
- Ձորագետ, Վահագնի և Արջուտ գյուղերի դպրոցների 1-4 դասարանի աշակերտներին գիտելիքի օրվա կապակցությամբ տրվել են գրենական պարագաներ:

- Ձորագյուղ գյուղում Լիլիա Աբրահամյանի և ABB /Էյդ Բիոնդ Բորդրս/ կազմակերպության միջոցներով, վարչական շենքի մեկ սենյակը նորոգվել է որպես մարզասրահ, տեղադրվել են մարզասարքեր: Ձորագյուղի հանդիսությունների սրահին տրամադրվել է խոհանոցային պարագաներ և գույք:

9) «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ի և համայնքի միջոցներով.

- Քարաբերդ գյուղում ստեղծվել է լուսավորության համակարգ՝ թվով 15 հենասյուները, լուսատուները և լարերը տրամադրվել է «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից, իսկ համակարգի ստեղծման աշխատանքներն իրականացվել են համայնքի բյուջեի միջոցներով:

10) «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի ներդրմամբ.

- Վահագնի գյուղի համայնքային շենքի առաջին հարկում հիմնադրվել է կարի արտադրամաս, բացվել է 10 աշխատատեղ, որտեղ աշխատում են Վահագնի գյուղի 8 կանայք:
- Եղեգնուտ և Վահագնի գյուղերի 20 ընտանիքի տրամադրվել է կարի մեքենա:

11) Պետական աջակցությամբ.

- ՀՀ Կառավարության կողմից 2022թ-ին սկսվել և ընթացքի մեջ է գտնվում «Եղեգնուտ-Դեբետ ճանապարհի կապիտալ նորոգում՝ ասֆալտապատման միջոցով» ծրագիրը:

12) «Հայկական Կարմիր Խաչի».

- Լոռու մարզային մասնաճյուղի կողմից «Տնային խնամք և ակտիվ երկարակեցություն» ծրագրի շրջանակներում Լեռնապատի մեծահասակների պարի խմբին է տրամադրվել 120,0 հազ. դրամ արժողությամբ կարի մեքենա:
- Արցախից տեղահանված 23 ընտանիքի տրամադրվել է սննդի փաթեթ՝ 570,0 հազ. դրամի սահմաններում:

13) «Գյուղատնտեսական» ԾԻԳ-ի /ծրագրերի իրականացման գրասենյան/ կողմից իրականացվել է.

- Մարգահովիտ գյուղի բնակիչներին անվճար տրամադրվել է 6 տոննա ազոտական պարարտանյութ և 200 կգ խոտի սերմ, ծրագրի ընդհանուր արժեքը 3000.0 հազ. դրամ:
- Մարգահովիտ գյուղի բնակիչներին է տրամադրվել 20 տ. օրգանական պարարտանյութ և 2 տ. կալիումական պարարտանյութ՝ 4000.0 հազ. դրամ արժողությամբ:
- Մարգահովիտ գյուղում կառուցվել է անասունների հավաքատեղի՝ ծրագրի արժեքը 2000.0 հազ. դրամ:

14) Համայնքի միջոցներով.

- Վահագնիի հիմնադրամի և համայնքապետարանի ուժերով վերանորոգվել է Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված Վահագն Վիշապաքաղ հուշարձանի հարակից տարածքի ցանկապատը:
- Վերանորոգվել է Դեբետ գյուղի փողոցային լուսավորության համակարգը և գերեզմանատան ցանկապատը:

- Արջուտ գյուղի միջնակարգ դպրոցում ներդրվել է ջեռուցման համակարգ, աշխատանքներն իրականացվել են Փամբակ համայնքի բյուջեից հատկացված 400,0 հազ. դրամ դրամաշնորհի հաշվին:
- Լեռնապատ գյուղում իրականացվել է թիվ 31, 32 և 33 փողոցների գիշերային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ: Բյուջեից ծախսվել է 1000,0 հազ. դրամ:
- 500.0 հազ. դրամի չափով դրամաշնորհ է տրամադրվել Եղեգնուտի միջնակարգ դպրոցին՝ դասասենյակի նորոգման համար:
- 500.0 հազ. դրամի չափով դրամաշնորհ է տրամադրվել Ձորագյուղի միջնակարգ դպրոցին՝ դպրոցի պատուհանները փոխելու աշխատանքների համար:
- Մարգահովիտ գյուղում իրականացվել է 1, 2, 4, 14 և 21-րդ փողոցների լուսավորության համակարգերի վերանորոգման աշխատանքներ:
- Համայնքապետարանի և Մարգահովիտի բնակիչների համատեղ ջանքերով հարթեցվել է գերեզմանատուն տանող ճանապարհը, իրականացվել են ջրատարների և կամուրջների մաքրման աշխատանքներ:
- Մարգահովիտի հանդիսությունների սրահը համալրվել է անհրաժեշտ գույքով /գազօջախ, սփռոցներ/:

15) Մարգահովիտ գյուղի բնակիչների նախաձեռնությամբ.

- Մարգահովիտ գյուղի կենտրոնական մասերում իրականացվել են աղբամանների շուրջը արգելապատնեշների կառուցման աշխատանքներ:
- Տիգրան Սարգսյանի նախաձեռնությամբ Մարգահովիտի «Քարհանք» հանդամասում տեղադրվել է «Նպատակների Խաչ», Հրաչ Մարադյանի և մի խումբ երիտասարդ մարգահովիտցիների կողմից համայնքի կենտրոնական մասում տեղադրվել է 2020-2022թթ պատերազմներում հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողների հիշատակին հուշաքար:
- Սեյրան Սարուխանյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ նորոգվել է Մարգահովիտի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տանիքը:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի մշտական բնակչության թիվը ՀՀ ոստիկանության ԱՎՎ Գուգարքի անձնագրային բաժնի կողմից տրված տվյալներով 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 13215 մարդ, որից տղամարդիկ կազմում են 7092 մարդ, կանայք՝ 6590:
Նպաստառուների թիվը՝ 506 ընտանիք:
2022 թվականի ընթացքում Փամբակ համայնքում ծնվել է 111 երեխա, մահացել 146 մարդ, գրանցվել է 48 ամուսնություն, 1 ամուսնալուծություն:
Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝
1. Համայնքի ավագանին՝ բաղկացած 15 անդամից, (ընտրված 2021 թվականի դեկտեմբերի 5-ին) լիազորությունների սկիզբը՝ 2021 թվականի դեկտեմբերի 23 (2022 թվականին համայնքի ավագանու 15 անդամներից 1-ի լիազորությունները դադարեցվել է, ավագանու անդամի լիազորությունների հետ անհամատեղելի աշխատանք իրականացնելու հետ կապված, ում մանդատը տրվել է տվյալ կուսակցության ցուցակի հաջորդ անդամին):
2. Համայնքի ղեկավարը ընտրվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին, լիազորությունների սկիզբը՝ 2021 թվականի դեկտեմբերի 23:
Համայնքի ղեկավարն իր լիազորությունները իրականացնում է հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:
Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքային միավորների թիվը 73 է, որից քաղաքական և հայեցողական պաշտոններ՝ 4, վարչական պաշտոններ՝ 14, համայնքային ծառայության պաշտոններ՝ 42, քաղաքացիական աշխատանք իրականացնողներ՝ 5, տեխնիկական սպասարկման անձնակազմ՝ 8:
2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայքապետարանի աշխատակազմում թափուր հաստիքների թիվը 6-ն է:
2022 թվականի ընթացքում համայնքային թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 47 մրցույթ, որից 6-ը չի կայացել՝ դիմողներ չլինելու պատճառով:
Հայտարարված մրցույթներին մասնակցած 48 անդամներից հաղթող են ճանաչվել 41:

ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

1. Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանությանբաժին
2. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
3. Իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժին
4. Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)

Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններն են.

1.Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ
2.Փամբակ համայնքի «Մարգահովիտի կրթամարզամշակութային համալիր (ԿՄՄՀ)» ՀՈԱԿ
3. Փամբակ համայնքի «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» ՀՈԱԿ
4.Փամբակ համայնքի «Լեռնապատի մանկապարտեզ» ՀՈԱԿ
5. Փամբակ համայնքի «Եղեգնուտի Հեքիաթ մանկապարտեզ»ՀՈԱԿ
6. Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ
7. Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ
8. Փամբակ համայնքի «Բազումի մանկապարտեզ» ՀՈԱԿ
9. Փամբակ համայնքի «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ;

2022 թվականի ընթացքում համայնքապետարանում մուտքագրվել է քաղաքացիներից ստացված 848 դիմում , որից ՝

- Դրամական օգնություն տրամադրելու մասին՝ 99 դիմում.
- Քաղաքաշինության և հողօգտագործման հարաբերությունները կարգավորելու մասով՝ 749 դիմում:

Դիմումներին սահմանված ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:
Իրավաբանական անձանցից ստացվել է 2102 գրություն:
Համայնքապետարանի կողմից պատրաստվել են 2031 ելից գրություններ, որոնք ուղարկվել են հասցեատերերին:
Համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրվել է թվով 1505 տեղեկանք՝ ըստ պահանջի:
2022 թվականի ընթացքում համայնքապետարանում ստացված հայտերին համապատասխան համայնքի ղեկավարի կողմից համայնքի վարչական տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտներին տրվել են հետևյալ թույլտվությունները

1. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառք՝ 180 թուլտվություն
2. ծխախոտի արտադրանքի վաճառք՝ 144 թույլտվություն
3. արտաքին գովազդի տեղադրում՝ 7 թույլտվություն,
4. հանրային սննդի կազմակերպման և իրացման՝ 42 թույլտվություն
5. տեխնիկական հեղուկներ՝ 2 թույլտվություն
6. հեղուկ վառելիքի վաճառք՝ 3 թույլտվություն
7. Ֆիրմային անվան՝ 2 թույլտվություն

8. ժամը 24:00-ից հետո գործունեության՝ 1 թույլտվություն:
Համայնքի ղեկավարն ընդունել է 1128 որոշում, արձակել 204 կարգադրություն:
Կայացել է Փամբակ համայնքի ավագանու 17 նիստ, ընդունվել 161 որոշում:
Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 174 հրաման:
Համայնքի ղեկավարի մոտ ընդունելությանը մասնակցել է 156 քաղաքացի:
2022 թվականին գույքային պարտավորությունները չկատարելու գծով հարուցվել է 1 վարչական վարույթ:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱՆԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ և հրապարակային,որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը Տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին:

Համայնքի ավագանու նիստերը հեռարձակվում են, որը նպաստում է Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ բնակչության իրազեկվածության բարձրացմանը, վստահության ամրապնդմանը, նիստերի անցկացման մասին հայտարարությունը տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև azdarar.am պաշտոնական հրապարակումների կայքում:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022թ-ի ընթացքում համայնքապետարանի կողմից տրամադրվել է 25 շինարարության թույլտվություն և 6 ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

Տրամադրվել է 38 նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) բնակելի տների և հասարակական սպասարկման օբյեկտների կառուցման համար:

Փոփոխվել է 6 հողակտորների նպատակային նշանակություն, որի ընթացքում, որպես կադաստրային արժեքի տարբերություն համայնքի բյուջե է մուտքագրվել 2738767ՀՀ դրամ:

Օրինականացվել է 20 ինքնակամ կառուցված շինություն որի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 3922000 ՀՀ դրամ:

Կազմակերպվել և անց է կացվել թվով 6 աճուրդ, որի ընթացքում օտարվել է ընդհանուր 15,44908 հա մակերեսով հողամաս, արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 14 178 285 ՀՀ դրամ:

Հասցեավորվել է 513 անշարժ գույք:

Առաջին պետական գրանցման ներկայացնելու համար կայացվել է հողահատկացման հիմքերի վերականգնման 156 որոշում:

Գյուղատնտեսության ոլորտում կազմակերպվել և իրականացվել է պարարտանյութերի սուբսիդավորման ծրագիր:

Ընթացքի մեջ է աշնանացան ցորենի ցանքսի սուբսիդավորվող ծրագիրը, որին մասնակցում է 195 հողօգտագործող:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՅԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի ընթացքում Փամբակի համայնքապետարան ստացվել են սոցիալական աջակցության մասին 99 դիմումներ, որից դրական եզրակացություն տրվել է 34 դիմումների, ինչի արդյունքում 34 ընտանիքի տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ 1290000 դրամի չափով:

2022թ-ի ընթացքում «Հայկական կարմիր խաչ» ընկերության կողմից Արցախից տեղահանված 23 ընտանիքի տրամադրվել է սննդի փաթեթ՝ 570,000 դրամի սահմաններում:

«Աստղիկ» ԲՀԿ-ի կողմից բոլոր բնակավայրերում թվով 200 սոցիալապես անապահով ընտանիքի տրամադրվել է աջակցություն՝ շուրջ 4,000,000 դրամի չափով: 100 ընտանիքի տրամադրվել է բիովառելիք՝ 8,000,000 դրամի չափով: Սոցիալապես անապահով ընտանիքների 250 երեխայի տրամադրվել է ձմեռային հագուստ՝ 7,700,000 դրամի սահմաններում:

«Վորլդ վիժն Հայաստան» կազմակերպության հետ իրականացվել է 2 ընտանիքի տնտեսական զարգացման ծրագիր՝ 1,600,000 դրամի սահմաններում:

«Դիակոնիա» ԲՀԿ-ի կողմից 10 ընտանքի տրամադրվել է բիովառելիք և վառարաններ՝ 3,000,000 դրամի սահմաններում:

2022թ-ի ընթացքում Լիլիա Աբրահամյանի միջնորդությամբ անհատ բարեգործների կողմից համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել են բնաիրային, տեխնիկական աջակցություններ, զարկ է տրվել անասնապահական բիզնեսի զարգացմանը՝ 9,000,000 դրամի սահմաններում:

Հաշվետու տարվա ընթացքում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրված սոցիալական աջակցությունը կազմել է 34,720,000 դրամ, որից 1 290 000-ը՝ համայնքի բյուջեից:

ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքային միջոցառումներ

Մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ Փամբակ համայնքի բնակավայրերում կազմակերպվել են միջոցառումներ, և ծաղկեփնջեր են նվիրվել տարբեր բնագավառներում համայնքի զարգացման գործում մասնագիտական ներդրում ունեցած կանանց:

Նվերներ են ստացել Փամբակ համայնքի դպրոցների բոլոր շրջանավարտները:

Փամբակ համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում համայնքային միջոցառումներ են կազմկերպվել երեխաների պաշտպանության օրվա՝ հունիսի 1-ի կապակցությամբ:

Գիտելիքի օրվա առթիվհամայնքի բոլոր առաջին դասարանցիները ստացել են նվերներ:

Բնակավայրերում կազմակերպվել են տարեմուտի միջոցառումներ, և համայնքի 0-10 տարեկան բոլոր երեխաները ստացել են Ամանորյա նվերներ:

Մարգահովիտև Փամբակ գյուղերում կազմակերպվել է 2020-2022 թվականների զոհերի հիշատակին կառուցված հուշաքարերի բացման միջոցառումներ:

<u>Համապատասխան աշխատակցի</u> կողմից իրականացվել են այցերհամայնքի մեջ ներառված գյուղեր, ծանոթացել գործող կրթական հաստատությունների պատասխանատուներիև վարչական ղեկավարների հետ, հավաքագրվել է նրանց կողմից արված առաջարկները և բարձրացված խնդիրները: Իրականացվել են այցեր Լեռնապատի, Եղեգնուտի, Մարգահովիտի, Ձորագյուղի, Դեբետի, Բազումի մանկապարտեզներ, կատարվել է ուսումնասիրություն ընդհանուր պայմանների, դասավանդման մեթոդիկայի, մանկապարտեզներին վերաբերող փաստաթղթերի վերաբերյալ, կատարվել է մանկապարտեզների աշխատանքների ներքին գնահատում ըստ ԿԳՄՍ նախարարության 1275 Ա/2 հրամանի:

Համայնքի պաշտոնական էջ՝ pambak.am կայք է մուտքագրվել մանակապարտեզներին վերաբերող անհրաժեշտ ինֆորմացիան, այսուհետ երեխաների մանկապարտեզ ընդունելությունը կատարվելու է կայքում հերթագրման միջոցով: Փաստաթղթաշարժի և գործավարության հիմնական մասը ևս կատարվելու է կայքի միջոցով:
Կազմակերպվել է հանդիպումներ Լեռնապատի, Եղեգնուտի, Մարգահովիտի երիտասարդական ակտիվ խմբերի հետ, քննարկվել կենտրոններն ակտիվացնելու, աշխատանքներն ավելի սիստեմատիկ և արդյունավետ դարձնելու հեռանկարը:

ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ «ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ

- Վահագնաձոր գյուղի ճանապարհների փոսալցման և խճապատման աշխատանքներ:
- Վահագնի բնակավայրի բնակիչների հետ համատեղ իրականացվել է կոյուղու ցանցի և սելավատարերի մաքրում և կառուցում: Իրականացվել են հանդամիջյանճանապարհներիվերանորոգման աշխատանքներ՝ ընդամենը 974 000 /ինը հարյուր յոթանասունչորս հազար/ ՀՀ դրամ արժողությամբ:

1. 3-րդ կարգի բնահողի մշակում բուլդոզերով 102 000 /մեկ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ,
2. ճանապարհի հարթեցում բնահողային խառնուրդով 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,
3. ճանապարհի հարթեցում առանց նյութի ավելացման 522 000 /հինգ հարյուր քսաներկու հազար/ ՀՀ դրամ:

- Իրականացվել է Ձորագետ բնակավայրի միջհամայնքային ճանապարհների փոսալցման և խճապատման աշխատանքներ:
- Լեռնապատ բնակավայրի բնակիչների հետ համատեղ կառուցվել է շուրջ 500 գծամետր ոռոգման ջրագիծ, իրականացվել է 30-րդ, 32-րդ, 33-րդ փողոցների փոսալցման, խճապատման, 4-րդ և 20-րդ փողոցների փոսալցման և հարթեցման աշխատանքներ: Տրամադրվել է աջակցություն շաբաթօրյակների կազմակերպման նպատակով:
- Իրականցվել է Լեռնապատ-Լեռնաջուր բնակավայրերն իրար կապող մոտ 7 կմ ճանապարհահատվածի հարթեցման և լայնացման աշխատանքներ՝ ընդամենը 987 000 /ինը հարյուր ութսունյոթ հազար/ՀՀ դրամ արժողությամբ.

1. 3-րդ կարգի բնահողի մշակում բուլդոզերով 117 000 /մեկ հարյուր տասնյոթ հազար/ ՀՀ դրամ,
2. Ճանապարհային հարթեցում բնահողային խարնուրդով 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,
3. Ճանապարհի հարթեցում առանց նյութի ավելացման 500.0 /հինգ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

- Մարգահովիտ բնակավայրում իրականացվել էասֆալտապատ ճանապարհի /բետոնե ծածկի/տեղային, փոսային նորոգում՝ 40մ² մակերեսով, 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ արժողությամբ:
- Եղեգնուտ գյուղում իրականացվել են գրեթե անանցանելի դարձած սարամիջյան ճանապարհների վերանորոգման, գյուղի միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների փոսալցման և խճապատման աշխատանքներ:
- Դեբետ բնակավայրում իրականացվել են ճանապարհաշինարարական աշխատանքներ 8-րդ և 9-րդ, 2-րդ և 3-րդ, 4-րդ և 6-րդ փողոցներում: Ամբողջ ընթացքում հսկողության տակ է եղել 1-ին փողոցը՝ իր նրբանցքներով: Տրամադրվել է աջակցություն շաբաթօրյակների կազմակերպման նպատակով:
- Ազնվաձոր բնակավայրում իրականացվել են դեպի խոտհարքներ և վարելահողեր տանող ճանապարհների փոսալցում, խճապատում և բարեկարգում:

- Արջուտ բնակավայրի բնակիչների հետ համատեղ իրականացվել են ներհամայնքային ճանապարհների լայնեցման, ավազակոպճի լցման և հարթեցման աշխատանքներ: վերանորոգվել է խմելու ջրագծի պոմպը՝ 440 000 /չորս հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ արժողությամբ:
- Լեռնապատ և Մարգահովիտ բնակավայրերում «Փամբակ Կոմունալ» ՀՈԱԿ-ին պատկանող տրակտորեների միջոցով իրականացվել են հակերի կապման աշխատանքներ:
- 2022 թվականի մայիս ամսին ,,COAF,, ԲՀ-ի կողմից անհատույց տրամադրվել է ՄԱՅ մակնիշի աղբատար մեքենա՝ 75 աղբարկղերի հետ միասին, որոնք տեղադրվել են Եղեգնուտ, Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ, Դեբետ գյուղերում, որից հետո նշված բնակավայրերում կատարվում է աղբահանության աշխատանքներ:
- 2022 թվականի օգոստոս ամսին ,,COAF,, ԲՀ-ի կողմից անհատույց տրամադրված ՊԱՅ մակնիշի ավտոբուսով սպասարկվում են Դսեղ, Դեբետ, Եղեգնուտ, Փամբակ, Վահագնաձոր գյուղերը, որոնք կապվում են մարզկենտրոն Վանաձորի հետ, ինչն իր դրական ազդեցությունն ունի միջհամայնքային տրանսպորտային կապի հարցում:
- «Փամբակ Կոմունալ» ՀՈԱԿ-ի և Ազուրիտ ՍՊԸ-ի աջակցությամբ Դեբետ գյուղում իրականացվել է համայնքային ճանապարհների ավազալցման և հարթեցման աշխատանքներ:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ս. ԱՆԱՆՅԱՆ

Հավելված 2
Փամբակ համայնքի ավագանու
2023թ-ի փետրվարի 27-ի թիվ 16-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ /ՏԱՊ/ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գ. Փամբակ

2023թ

2022թ տարեկան աշխատանքային պլանով /այսուհետ ՏԱՊ/ նախատեսված ծրագրերի լուծման ուղղությամբ 2022թ-ին իրականացվել են ներքոնշյալ աշխատանքները:

1) Համայնքի Մարգահովիտ, Լեռնապատ, Բազում, Վահագնաձոր և Ձորագյուղ բնակավայրերի ճանապարհների կապիտալ նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով:

ՏԱՊ-ի առաջին ծրագրի ուղղությամբ Մարգահովիտ, Լեռնապատ, Բազում, Վահագնաձոր և Ձորագյուղ գյուղերում իրականացվել է 3.6 կմ ճանապարհների կապիտալ նորոգում ընդհանուր 173 166 964 դրամ արժողությամբ, որից համայնքի ներդրումը կազմել է 77 925 139 դրամ, պետության կողմից հատկացված սուբվենցիան՝ 95 241 825 դրամ:

2) Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի կառուցում և նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ:

ՏԱՊ-ով նախատեսված երկրորդ ծրագրի կատարման ուղղությամբ Եղեգնուտ և Լեռնաջուր գյուղերում իրականացվել է 8.0 կմ երկարությամբ գիշերային լուսավորության համակարգի կառուցում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ ընդհանուր 48308000 դրամ արժողությամբ, որից համայնքի ներդրումը կազմել է 19323200 դրամ, պետության կողմից հատկացված սուբվենցիան՝ 28984800 դրամ:

3) Ձորագետ բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող շենքի ամրացում և տանիքի կապիտալ նորոգում, որը հետագայում կարող է ծառայել որպես մշակութային օջախ, տարեցների ժամանցի վայր և այլն:

ՏԱՊ-ով նախատեսված երրորդ ծրագրի կատարման ուղղությամբ իրականացվում է Ձորագետ բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող շենքի ամրացում, տանիքի կապիտալ հիմնանորոգում՝ ընդհանուր 78 553744 դրամ արժողությամբ, որից համայնքի ներդրումը կազմում է 47132246 դրամ, պետության կողմից հատկացվելիք սուբվենցիան՝ 31421498 դրամ: Կապված եղանակային պայմանների հետ ծրագիրը ամբողջությամբ չի ավարտվել, աշխատանքները տեղափոխվել են 2023թ.:

4) Համայքի բնակավայրերի մանկապարտեզների վերանորոգում և գույքի ձեռք բերում:

ՏԱՊ-ով նախատեսված չորրորդ ծրագրի կատարման ուղղությամբ ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ այլընտրանքային նախադպրոցական ծառայություններ ծրագրի շրջանակներում Անտառամուտ և Արջուտ գյուղերում բացվել են այլընտրանքային մանկապարտեզներ, շենքի տանիքներին տեղադրվել են արևային ֆոտովոլտային համակարգեր: Նույն ծրագիրն իրականացվում է Ազնվաձոր գյուղում ՀՀԿԳՄՍ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի համաֆինանսավորմամբ: 3 ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 22590700 դրամ:

5) Փամբակ համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում:

ՏԱՊ-ով նախատեսված հինգերորդ ծրագրի կատարման ուղղությամբ համայնքում ստեղծվել է «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ը: Հայաստանի Սոցիալական Ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ Տեղական Զարգացման ծրագիր շրջանակում իրականացվում է Փամբակ համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում ծրագիրը: Ընդանուր բյուջեն կազմում է 172200 000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմում է 8 610 000 ՀՀ դրամ: Ծրագրի արդյունքում համայնքը կունենա էքսկավատոր CAT -428F2՝ 1 հատ, ինքնաթափ Shachman՝ 1 հատ, աղբատար՝ 2 հատ, աղբաման 700 լ տարողությամբ՝ 50 հատ: Ծրագրի ավարտից հետո նշված գույքը կհանձնվի ՀՈԱԿ-ին, մի շարք հիմնախնդիրներ հնարավոր կլինի հասցնել իրենց հանգուցալուծմանը: Համայնքը իր կողմից արդեն իսկ կատարել է ներդրումը, նախատեսված տեխնիկայի և գույքի ձեռքբերման աշխատանքները մոտենում են ավարտին:

«Հայաստանի մանուկներ» /ՔՈԱՖ/ բարեգործական հիմնադրամի միջոցներով Փամբակ համայնքի Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ, Եղեգնուտ և Դեբետ գյուղերում իրականացվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության ներդրում» ծրագիրը: Ծրագրի արդյունքում ձեռք է բերվել և «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ին է հանձնվել MAZ մակնիշի աղբատար մեքենա, նշված բնակավայրերում տեղադրվել են 75 աղբամաններ՝ ընդհանուր 37000,0 հազ դրամ արժողությամբ: ՀՈԱԿ-ի կողմից պատշաճ իրականացվում են աղբահանության աշխատանքները:

6) Քաղաքացիների սպասարկման գրասենյակի /ՔՍԳ/ կառուցում:

ՏԱՊ-ով նախատեսված վեցերորդ ծրագրի կատարման ուղղությամբ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության՝ ԳՄՀԸ-ն (Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH) ֆինանսավորմամբ Փամբակի համայնքապետարանում ստեղծվել է սպասարկման գրասենյակ: Ծրագրի ընդանուր բյուջեն կազմել է 12 041 990 ՀՀ դրամ: Ծրագրի արդյունքում վերանորոգվել է գրասենյակը՝ 6 աշխատակցի հաշվով ձեռք է բերվել գրասենյակային գույք և համակարգչային տեխնիկա: Ծրագրի արդյունքում ավելի հարմարավետ է դարձել համայնքապետարանի աշխատակիցների աշխատանքը, համայնքի բնակիչներին մատուցվում է ավելի որակյալ ծառայություն, բարձրացել է սպասարկման որակը:

7) Արջուտ բնակավայրի համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում:

ՏԱՊ-ով նախատեսված յոթերորդ ծրագրի կատարման ուղղությամբ Արջուտ գյուղի համար սուբվենցիոն ծրագրով ձեռք է բերվել Բելառուս կլասի տրակտոր՝ էքսկավատոր ԷՕ-2626: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 21960000 ՀՀ դրամ:

8) Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կառուցում:

ՏԱՊ-ով նախատեսված ութերորդ ծրագրի կատարման ուղղությամբ «Եվրասիա» ԲՀԿ-ի աջակցությամբ «ՏԻՄ-երի առաջնորդության հմտությունների զարգացում» ծրագրի շրջանակներում Վահագնի գյուղի կողմից ներկայացվել է «Նոր կյանք տեխնոպարկին» զարգացման ծրագիրը, որը կյանքի է կոչվել «Եվրասիա» ԲՀԿ-ի, համայնքապետարանի և «Վահագնի» զարգացման հիմնադրամի ուժերով: Վերանորոգվել է տեխնոպարկի տանիքը, համայնքի կողմից տրամադրվել է տանիքի թիթեղները, «Եվրասիա» ԲՀԿ-ի կողմից ֆինանսավորվել է աշխատանքները 615000 դրամի չափով: Ծրագրով նախատեսված մյուս աշխատանքներն ընթացքի մեջ են:

9) Ավտոբուսի ձեռք բերում:

ՏԱՊ-ով նախատեսված իններորդ ծրագրի կատարման ուղղությամբ «Հայաստանի մանուկներ» /ՔՈԱՖ/ բարեգործական հիմնադրամի միջոցներով Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ին է տրամադրվել 69023000 դրամ արժողությամբ ՊԱՅ մակնիշի ավտոբուս, երթուղին անցնում է Դսեղ, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր և Փամբակ գյուղերով և նրանք կապում է մարզկենտրոն Վանաձորին, բնակիչներին մատուցվում է որակյալ տրանսպորտային ծառայության:

10) Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության ներդրում:

ՏԱՊ-ով նախատեսված տասներորդ ծրագրի կատարման ուղղությամբ «Հայաստանի մանուկներ» /ՔՈԱՖ/ բարեգործական հիմնադրամի միջոցներով Փամբակ համայնքի Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ, Եղեգնուտ և Դեբետ գյուղերում իրականացվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության ներդրում» ծրագիրը: Ծրագրի արդյունքում ձեռք է բերվել MAZ մակնիշի աղբատար մեքենա, նշված բնակավայրերում տեղադրվել են 65 աղբամաններ՝ ընդհանուր 37000,0 հազ դրամ արժողությամբ: «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից պատշաճ իրականացվում են աղբահանության աշխատանքները:

ՏԱՊ-Ի ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնք /բնակավայր/	2022թ-ին իրականացված ծրագրի անվանումը	Համայնքի ներդրում /ՀՀ դրամ/	Պետ. բյուջեի ներդրում /ՀՀդրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /ՀՀ դրամ/	Ընդամենը՝ ծրագրի արժեք /ՀՀ դրամ/
Փամբակ /Մարգահովիտ, Լեռնապատ, Բազում, Վահագնաձոր և Ձորագյուղ/	Մարգահովիտ, Լեռնապատ, Բազում, Վահագնաձոր և Ձորագյուղ բնակավայրերի ճանապարհների կապիտալ նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով	77 925 139	95 241 825	0	173 166 964
Փամբակ /Եղեգնուտ, Լեռնաջուր/	Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի կառուցում և նորոգում ՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ	19323200	28984800		48308000
Փամբակ /Ձորագետ/	Ձորագետ բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող շենքի ամրացում, տանիքի կապիտալ հիմնանորոգում	47132246	31421498		78 553744
Փամբակ /Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ/	Համայքի բնակավայրերի մանկապարտեզների վերանորոգում և գույքի ձեռք բերում	280000		ՀՀԿԳՄՍ 7737000, ՅՈՒՆԻՍԵՖ՝ 14573700, արևային պանելներ, գույք, մասնագ, վերապատր.	22590700
Փամբակ /Փամբակ/	Փամբակ համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում	8610000		Հայաստանի Սոցիալական Ներդրումների հիմնադրամ՝ 163590000	172200000
Փամբակ /Փամբակ/	Փամբակի համայնքապետարանում սպասարկման գրասենյակի հիմնում	0	0	ԳՄՀԸ՝ (GIZ) ՝ 12041990	12041990
Փամբակ	Գյուղատնտեսական տեխնիկայի	12256600	9703400		21960000

/Արջուտ/	ձեռք բերում				
Փամբակ /Վահագնի/	Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կառուցում	Տանիքի թիթեղներ		«Եվրասիա» ԲՀԿ 615000	615000
Փամբակ /Փամբակ/	Ավտոբուսի ձեռք բերում			«Հայաստանի մանուկներ» /ՔՈԱՖ/ ԲՀ 69023000	69023000
Փամբակ /Փամբակ/	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության ներդրում			«Հայաստանի մանուկներ» /ՔՈԱՖ/ ԲՀ 37000000	37000000

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ս. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 17-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 09.02.2023թ. թիվ 16 դրական եզրակացությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, Ժիրայր Սուրենի Չոբանյանի և իր ընտանիքի սեփականություն հանդիսացող 06-070-0050-0001 կադաստրային ծածկագրով 0,0292 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասը, կադաստրային քարտեզի սխալի ուղղման նպատակով, փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 18-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով և 82.1-ին հոդվածով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 58-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվացքների նախարարության ներկայացրած համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման մեթոդական ուղեցույցը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Փամբակ համայնքի 2023թ-ի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 19-Ա

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍՈՖԻԱ ՍՈՒՐԵՆԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Սոֆիա Սարդարյանի հայտը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սոֆիա Սուրենի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0335-0002 ծածկագրով 0.09118 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսքը ջերմոցներ՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 20-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 89-րդ հոդվածով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հովիկ Աթոյանի դիմումը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն տալ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնք Վահագնաձոր 3-րդ փողոց 1-ին նրբանցք 9-1/1 տարածք հասցեում /կադաստրային ծածկագիր՝ 06-102-0250-0004/, համայնքային սեփականություն հանդիսացող 92.39 քմ մակերեսով տարածքը, բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած 0,02 հա հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ սեփականության իրավունքի համայնքի բաժնեմասը Հովիկ Ազատի Աթոյանին և Անահիտ Գագիկի Ավետիքյանին նվիրատվություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին Հովիկ Ազատի Աթոյանի և Անահիտ Գագիկի Ավետիքյանի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՒՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 21-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 89-րդ հոդվածով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Գևորգ Մքոյանի դիմումը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնք Վահագնաձոր 3-րդ փողոց 1-ին նրբանցք 9-1/1 տարածք հասցեում /կադաստրային ծածկագիր՝ 06-102-0250-0004/, համայնքային սեփականություն հանդիսացող 103.83 քմ մակերեսով տարածքը, բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած 0,02 հա հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ սեփականության իրավունքի համայնքի բաժնեմասը Գևորգ Սարիբեկի Մքոյանին և Վարդուհի Հրանտի Աղաջանյանին նվիրատվություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին Գևորգ Սարիբեկի Մքոյանի և Վարդուհի Հրանտի Աղաջանյանի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԻ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 22-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի տրամադրման» կարգի 46.2 կետի դ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, կառուցապատման և վարձակալության իրավունքով տրամադրելուն:
2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողատեսքեր՝ 6 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-107-0514-0011 ծածկագրով 0,008626 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0224-0012 ծածկագրով 0.01979 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 67000/վաթսունյոթ հազար ՀՀ դրամ:

-Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0040-0016 ծածկագրով 0.51943 հա գյուղատնտեսական 5-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 270000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0251-0003 ծածկագրով 0.042899 հա բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0282-0002 ծածկագրով 0.2322 հա գյուղատնտեսական 1-ին կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 361000 /երք հարյուր վաթսունմեկ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 6: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0040-0017 ծածկագրով 0.0767 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս:
Մեկնարկային գինը սահմանել 110000 /մեկ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ:
Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամաս՝ 1 լոտով.
-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0336-0044 ծածկագրով 0.126 հա գյուղատնտեսական նշանակության4-րդ կարգի խոտհարք՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:
Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
4. Կառուցապատման իրավունքով՝ 50 տարի ժամկետով տրամադրվում է հողամաս 1 լոտով:
-Լոտ 1. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-066-0102-0045 կադաստրային ծածկագրով ջրային նպատակային նշանակության, ջրային գործառնական նշանակության 0.47893 հա հողամաս և 70.6 ք/մ ընդհանուր մակերեսով պոմպակայան:
Հողամասի տարեկան կառուցապատման վճար սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ, պոմակայանի տարեկան վարձավճարի չափը՝ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
5. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի N 42-Ա որոշման 2 կետի 6-րդ ենթակետը.
6. Համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանին՝ ապահովել աճուրդով վաճառվող, վարձակալությամբ և կառուցապատման իրավունքով հատկացվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 23-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2023թ-ի մարտի 24-ը ժամը 13.00:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ